ԱՐՑԱԽ. ԲԱՑ ՎԵՐՔ

Ղարաբաղյան պրոբլեմը, մեր ազգային գերխնդիրը նման է պրկված զսպանակի, այն ինչքան ձգվում, այնքան ահագնանում է։ Վկայությունը՝ վերջին օրերի հուզումները. ժողովուրդը վերստին ալեկոծվել է՝ գործադուլներ, դասադուլներ, միտինգներ ոչ միայն Արցախում, այլև այստեղ՝ մայր Հայաստանում։

Ի՞նչ իրավիճակ է հիմա այնտեղ, ի՞նչ է լինելու վաղը և առհասարակ. այս և համանման հարցերի պատասխանն ընկառավարման կոմիտեի անդամ, մարզի ժողովերահսկողության կոմիտեի նախագահ ՎԼԱԴԻՄԻՐ ԹՈՎՄԱՍՅԱՆԻ հետ։ Ստորև ներկայացնում ենք այդ հարցազրույցը։

— Ընդհանուր տիրող իրավիճակը հայտնի է բոլորիս, խնդրում եմ համառոտակի ներկայացնել ի՞նչ է կատարվում մարզում, մասնավորապես Ստեփանակերտում, հենց այսօր։

— Շարունակվում է գործադուլը բոլոր հիմնարկ-ձեռնարկություններում, նույնիսկ գյուղատնտեսական ճակատում։ Գործադուլն արդեն կորում է քաղաքական բնույթ, ընդունել է քաղաքական պայքարի ձև, քանի որ Ղարաբաղի ժողովուրդը սպառել է մյուս ձևերը։ Մենք հասկանում ենք, որ դա վնասում է մարզի տնտեսությանը, յուրաքանչյուր ընտանիքի, ամեն մի ղարաբաղցու. բայց այլ ելք չկա։

Անիմաստ գործադուլ չի լինում, ղարաբաղցիները դիմելով այդ քայլին, հետևյալ պահանջներն են դնում։ Գլխավորը. հատուկ կառավարման ձև մտցնելուց հետո վերջ դնել հանրապետության կողմից մեր գործերին խառնվելու շարունակվող քաղաքականությանը։ Այսուսը, վերականգնել մարզային կուսակցական, խորհրդային մարմինների գործունեությունը։ Եվ երրորդը (որն, ի դեպ, ծնեց ընթացիկ գործադուլը), դադարեցնել հանրապետության կողմից ադրբեջանական գյուղերում լայնորեն ծավալված սոցիալ-տնտեսական զարգացման աշխատանքները։

Դրությունն այսպիսին է. ազգամիջյան հարաբերությունները գնալով լարվում են և հղի են անկանխատեսելի հետևանքներով։ Ըմբռնելով այդ ամենը, մենք՝ ընկեր Մ. Ս. Գորբաչովին հղած բաց նամակի 14 հեղինակներս, դիմել ենք մարզի հայ բնակչությանը՝ ցուցաբերել սթափություն և բանականություն, չենթարկվել ոչ մի պրովոկացիայի, ստեղծել բարենորմալ պայմաններ մոսկովյան սպասվող հանդիպման համար։

— Հոգնել ենք կիսատ-պռատ, Պարույր Սևակի բառերով ասած՝ «մանրաքանդակ պաղ խոսքերից», մանավանդ սուտ ու պատիր խոստումներից, ժողովուրդը ճշմարտության է կարոտ, մեղք է ժողովուրդը։ Ուստին՝ ժուռնալիստի իմ պարտքն է անպայման տալ հետևյալ հարցը, պաշտոնյայի ձեր պարտականությունը՝ ասել ճշմարտությունը. արդյո՞ք ժամանակ շահելու կամ ինչ-ինչ ընկատառումով թելադրված տակտիկական քայլ չէր կառավարման հատուկ կոմիտեի ստեղծումը կենտրոնի կողմից։ Իրատես լինենք. երկու ամիս առաջ երբ եղա Արցախում, ինձ թվաց, որ կոմիտեն կոչված է միայն տարբեր բնույթի ու տնողության ժողովներ անելու։ Ճիշտն ասած, չեմ հավատում, որ ադրբեջանական գյուղերում շինարարություն կատարվի, այն էլ օրը ցերեկով, բայց կոմիտեն չիմանա...

— Ըստ սահմանադրության նման բարդ իրավիճակում իրոք պիտի ստեղծվեր այդօրինակ մի մարմին։ Եվ քանի որ երկրում համանման փորձ չկար, մենք՝ ղարաբաղցիներս և կարծում եմ նաև Հայաստանում, կոմիտեի ստեղծումը ընդունեցինք որպես պրոբլեմի քաղաքական լուծման առաջին քայլը։ Բայց չորսամսյա փորձը ցույց է տալիս, որ նախնական եզրահանգումը հիմքեր չուներ, քանի որ կոմիտեն իր ամբողջ գործունեությունն ուղղել է լոկ Լեռնային Ղարաբաղի սոցիալ-տնտեսական հարցերի լուծմանը։ Մենք մեր ժողովրդի ապրելակերպի բարգավաճմանը դեմ չենք, կուզենայինք օգնել կոմիտեին այդ հարցերի լուծման գործում, բայց, արտահայտելով Ղարաբաղի հայ բնակչության իղձը, ուզում եմ նորից պնդել, որ գլխավորը հարցի քաղաքական լուծումն է, այսինքն միացումը Հայաստանին։

Ասենք, մեր երկրում ժողովների դերը մեծ է անհետաձգելի, հրատապ հարցերի լուծման գործում։ Այս դեպքում էլ այդպես է։ Ինչ մնում է կոնկրետ օբյեկտների կառուցմանը, ուզում եմ ձեզ ևս հայտնել, որ կոմիտեն այդ կառուցումների, շինաշխատանքների մասին տեղյակ էր։ Ես ի պաշտոնե ժամանակին ահազանգել եմ, տեղյակ պահել ղեկավարությանը։

— Ընկեր Ա. Վոլսկին դեռ փետրվարին խոստացավ մեր թերթին հարցազրույց տալ, բայց այդպես էլ խոստումը չկատարեց, դա իր գործն է։ Ինձ հետաքրքրում է մեկ այլ բան. գոնե դուք և կոմիտեի մյուս հայ անդամը՝ ընկ. Ս. Բաբայանը, ձեր նիստերում, ժողովներում հարցն այսպես կտրուկ երբևէ դրե՞լ եք՝ որ միացումը կփրկի Ղարաբաղին։ Հենց այդպես, առանց պաշտոնական սեթևեթանքի... Ախր, կոմիտեին է՞լ պիտի բացատրենք, որ Ղարաբաղը պատմական Հայաստանի մի մասն է, հայերի բնիկ օրրաններից մեկը։ Նույնն է, թե գոռանք, ապացուցենք, որ Լենինգրադ-Պետերբուրգը հիմնել-շինել է Պյոտր Առաջինը, այն ռուսների քաղաքն է, ոչ թե ուրիշի...

— Ինձ թվում է ընկ. Ա. Վոլսկին խոստումը չկատարելու պատճառ ունի, պարզապես լավ բան ասելու դեռ ոչինչ չկա։

Ինչպես վերջերս ունեցած հեռուստահարցազրույցի ժամանակ ասացի, թե կոմիտեի նախագահը, թե մյուս անդամները՝ քաջատեղյակ են մարզի հայ բնակչության ցանկությանը և ամեն անգամ հիշեցնել այդ մասին՝ ավելորդ կլիներ և աննպատակ։ Լավ իմացեք, մեր բոլոր գործողությունները կոմիտեի նիստերում, ինչպես նաև ամենօրյա շտաբի հավաքներում միայն այդ նպատակին են միտված։ Ինչ վերաբերում է քաղաքական լուծմանն առնչվող հարցադրմանը, ապա կարող եմ ասել, որ կոմիտեին այդպիսի իրավունք չի տրված։ Թեև ես համոզված եմ, որ կոմիտեի ավելի ակտիվ գործունեությունը մեծապես կարող է նպաստել հարցի լուծմանը։

— Մեր ժողովուրդը ցնցված է օրերս հայկական հեռուստատեսությամբ ընկեր Վ. Սիդորովի ունեցած ելույթից։ Դառը, ցավագին իրողություն. շա՞տ ենք լավատես, արտասվելու աստիճան հուզվում-հրճվում ենք, երբ իրական բաներ են ասում, թեկուզ ուշացումով։ Ինչո՞ւ, օրինակ, իբրև հատուկ կոմիտեի անդամ նա կամ ձեզանից մեկն ու մեկը օբյեկտիվ խոսք չի ասում կենտրոնական մամուլի էջերում, որպեսզի բոլորն ի վերջո հասկանան, որ մեր շարժումը էքստրեմիստական, նացիոնալիստական և էլի չգիտեմ ինչ-ական կիրք չէ, այլ ազնիվ և արդար պայքար։

— Վ. Սիդորովը առաջին անգամ չէ, որ հանդես է բերում օբյեկտիվություն՝ ստեղծված իրավիճակին անաչառ գնահատական տալու հարցում։

Ես վստահ չեմ, որ եթե մեզնից որևէ մեկը կենտրոնական մամուլին ներկայացներ նման նյութ, անխաթար կտպագրեին։ Ձեր դիտողությունն ընդունում եմ։ Իրոք, այդ խնդիրը արժանի է ուշադրության, ես խոստանում եմ կոմիտեում այդ հարցը սուր կերպով դնել։

Ղարաբաղյան շարժումը հակաֆերակառուցողական, հակասոցիալիստական չէ. հարցն այդպես են բացատրում առանձին անպատասխանատու լրագրողներ, անհատներ։ Այդ «հանրա» պիտակավորողների թվում են ադրբեջանական այսպես կոչված պատմաբանները, գործիչներ, ընդհուպ մինչև բարձրաստիճան ղեկավարներ։

— 1988-ի փետրվարի առաջին օրերին, ի թիվս շատ ու շատ իմաստուն ու ճիշտ կարգախոսների, Թատերական հրապարակում նաև այսպիսի մի լոզունգ էր թևածում՝ «Ղարաբաղյան շարժումը վերակառուցման փորձությունն է»։ Ասել կուզի, եթե արդարացի չլուծվի հարցը, նաև վերակառուցում չի լինի։ Երկուսս էլ կոմունիստներ ենք և քաղաքական աշխատողներ, շիտակ լինենք. մի՞թե ճշմարտությունը չէր «բարբառում» այդ կարգախոսը։ Դուրս է գալիս վերակառուցում լոկ խոսքով։ Այդպե՞ս է։ Ձեր կարծիքը մայիսի 19-ի մոսկովյան հերթական հանդիպման մասին։ Անձամբ ես այսպես հասկացա. երկրաշարժի հետևանքների վերացմամբ զբաղվեք, ձեզ բոլորն օգնում են, իսկ դուք...

— Ամբողջ վերակառուցման գործի վրա ինչպես կազդի ղարաբաղյան հարցի լուծումը, դժվարանում եմ ասել, բայց որ ազգամիջյան հարաբերություններում ոչ մի վերակառուցման չենք հասնի, դրանում համոզված եմ։ Ապացույց՝ խնդրեմ։ Լենինյան ազգային քաղաքականության մեջ ազգերի ինքնորոշման իրավունքը գլխավոր սկզբունքն է, իսկ արցախյան պրոբլեմը հենց այդ սկզբունքով պետք է լուծել։

Ես արդեն ասացի, որ հատուկ կառավարման կոմիտեին միութենական մարմինները չեն արտոնել հարցի վերջնական լուծման իրավունք։ Ինչպես հայտնի դարձավ նոր հանդիպումից, կոմիտեին տրվել են նոր արտոնություններ։ Եթե դրանք կօգնեն վերջնական լուծման, ես շատ ուրախ կլինեմ...

— «Ղարաբաղ» կոմիտեի լիդերների մասին ձեզ հայտնի է, նրանք այս էլ քանի ամիս մեզ համար գոնե անորոշ-անիմաստ նստած են այնտեղ, իսկ «Կոռունկի» անդամների վիճակը ո՞նց է։

— Ճիշտն ասած, ես լավատեղյակ չեմ։ Ինձ այսպես է թվում. թեև «Ղարաբաղ» կոմիտեի անդամների ձերբակալումը այլ ձևերով է բնորոշվում, սակայն թերևս կրում է քաղաքական բնույթ, քանի որ այն կապված է մեր շարժման հետ։

Ինչպես հայտնի է «Կոռունկ» անվան տակ գործել է մարզի հիմնարկ-ձեռնարկությունների ղեկավարներից խորհուրդ, որն առաջնորդում էր ղարաբաղյան հիրավի համաժողովրդական շարժումը, և մեծ հարգանք ուներ ժողովրդի մեջ։

— Ուրիշ ինչ կասեիք մեր ընթերցողներին։

— Պայքարել և հուսալ մինչև միացում...

Հարցազրույցը վարեց՝
Հակոբ ՄԱՐՏՈՒՆԻՆ